

Հայ ժողովրդի պատմության ժամանակագրություն

1963 մարտ 17 Տեղի են ունենում Հայկական ԽՍՀ վեցերորդ գումարման Գերագույն խորհուրդի ընտրությունները:

ապրիլ 15 ԽՍՀՄ Գերագույն խորհուրդի նախագահության հրամանագրով քանդակագործ Արա Սարգսյանին շնորհվում է ԽՍՀՄ ժողովրդական նկարչի պատվավոր կոչում:

ապրիլ 29 Տեղի է ունենում Երևանի ջերմաէլեկտրակայանի առաջին ագրեգատի գործարկումը:

մայիս 20 Մոսկվայում ավարտվում է աշխարհի շախմատի չեմպիոնի կոչման համար Բոսվիկինիկ-Պետրոսյան մատչը՝ Տ. Պետրոսյանի հաղթանակով:

մայիս 28 Գործարկվում է յոթնամյակի հսկաներից մեկը՝ Ագարակի պղնձ-մոլիբդենային կոմբինատը:

սեպտեմբեր 25 Բացվում է գյուտարարների և ռացիոնալիզատորների հանրապետական առաջին համագումարը (երկրորդը՝ 1965 թվականին):

հոկտեմբեր 26 Մեծ հանդիսավորությամբ նշվում է Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը:

հոկտեմբեր 28 Վիեննայում մահացավ ականավոր հայագետ Ներսես Ակինյանը: (Ծնվ. 1883թ.-ին):

նոյեմբեր 25 Երևանում բացվում է Հայկական ԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտական նստաշրջանը՝ Աղբյուրանական ԽՍՀ և Վրացական ԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտների և ԽՍՀՎ Կենտկոմին առընթեր ՄԼԻ Անդրկովկասյան ֆիլիալների մասնակցությամբ՝ նվիրված Անդրկովկասի ժողովուրդների բարեկամությանը:

1964 **ապրիլ 6** Երևանում տեղի է ունենում Կիև-Թբիլիսի-Բաքու-Երևան քաղաքների բարեկամության երեկո:

մայիս 30 Էստոնիայի մայրաքաղաք Տալլինում բացվում է հայ գրականության և արվեստի շաբաթ:

հունիս 25 Երևանում հիմնադրվում է Ափյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե:

հոկտեմբեր 22 Երևանում բացվում է ֆիզիոլոգների համամիութենական համագումարը:

դեկտեմբեր 21 Երևանում մահացավ ականավոր գրող Մովսես Արազին: (Ծնվ. 1878 թ.-ին):

դեկտեմբեր 24 ՀԽՍՀ Գերագույն խորհուրդի նախագահության հրամանագիրը Հայկական ԽՍՀ Արթիկի, Գուգարքի, Կամոյի և Հրազդանի շրջաններ կազմելու մասին:

1965 **մարտ 8** ԽՍՀՄ Գերագույն խորհուրդի նախագահության հրամանագիրը ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանին Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում շնորհելու մասին:

մարտ 12 Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում տեղի է ունենում Խորհրդային Հայաստանի հայրենադարձ հայերի հանրապետական հավաք:

ապրիլ 10 Տեղի է ունենում Երևանի

պետական համալսարանի գլխավոր կորպուսի հանդիսավոր բացումը:

ապրիլ 16 Երևանում տեղի է ունենում Կիև-Թբիլիսի-Բաքու-Երևան քաղաքների բարեկամության երեկո:

մայիս 2 Մահացավ սովետահայ ականավոր գրող և հասարակական գործիչ Հրաչյա Քոչարը: (Ծնվ. 1909թ.-ին):

հունիս 17 Երևանում բացվում է Ալ. Իսահակյանի արձանը:

սեպտեմբեր 6 Երևանում բացվում է անալիտիկ ֆունկցիաների տեսությանը նվիրված միջազգային գիտաժողով:

նոյեմբեր 29 Երևանում բացվում է Մ. Նալբանդյանի արձանը:

նոյեմբեր 30 Սոֆիայում տեղի է ունենում հայկական կուլտուրայի տասնօրյակի հանդիսավոր բացումը:

1967 **հոկտեմբեր 11** Վախճանվեց նավատորմի ծովակալ Իվան Իսակովը: (Ծնվ. 1894թ.-ին):

նոյեմբեր 5 Երևանում գործարկվեց էլեկտրոնային օղակաձև արագացուցիչը:

նոյեմբեր 28 Երևանում տեղի ունեցավ Ծիծեռնակաբերդի բարձունքի վրա կառուցված 1915 թ. Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձան-կոթողի բացումը:

1968 **մայիս 25** Տեղի ունեցավ Սարդարապատի ճակատամարտին նվիրված հուշարձանի հանդիսավոր բացումը:

հուլիս 5 Վախճանվեց նշանավոր դերասան Վահրամ Փափազյանը: (Ծնվ. 1888թ.-ին):

հոկտեմբեր 18 Նշվեց Երևանի հիմնադրման 2750-ամյակը:

1969 **սեպտեմբեր 5** Թիֆլիսում վախճանվեց ակադեմիկ (հայագետ) Մելիքսեթբեկը:

1970 **նոյեմբեր 29** Տեղի ունեցավ Հրազդանի լեռնաքիմիական կոմբինատի ցեմենտի գործարանի գործարկումը:

դեկտեմբեր 9 Վախճանվեց հայ ավիոկոնստրուկտոր Արտեմ Միկոյանը: (Ծնվ. 1905թ.-ին):

1971 **հունիս 17** Խորհրդային գաղտնի ոստիկանության կողմից սպանվեց հայ բանաստեղծ, մշակութային գործիչ, գրականագետ Պարույր Սևակը: (Ծնվ. 1924թ.-ին):

1972 **մարտ 20** Հայկական ԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր Հայկական հեռագրական գործակալությունը վերակազմվեց պետական ինֆորմացիոն գործակալության՝ Արմենպրեսի:

մայիս 5 Վախճանվեց մեծ նկարիչ Մարտիրոս Սարյանը: (Ծնվ. 1880թ.-ին):

հոկտեմբեր 27 Ավարտվեց Հրազդանի պետական շրջանային էլեկտրակայանի առաջին հերթի շինարարությունը:

նոյեմբեր 3 Գ. Սունդուկյանի հուշարձանի բացումը Երևանում:

(Շարունակելի)

ՀԱՅՈՑ ԶԻՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼՆԵՐԸ

ԶԻՖԹԱԼԱՐՅԱՆՆԵՐ

Զինագործությունը հայկական հնագույն արհեստներից է: Արեւելքի մի շարք երկրներում եւ Հայաստանում պատերազմի ժամանակ զորամասերի հետ միշտ տանում էին զինագործ արհեստավորների, որոնք ճանապարհին աշխատում էին զորքերի կարիքների համար՝ նորոգում վնասված զենքերը, պատրաստում նորերը: Հայաստանի զինագործության նշանավոր կենտրոններ են եղել Դվինն ու Անին, Կարինն ու Խլաթը, որտեղ պատրաստված բարձրորակ զինատեսակները նաեւ արտահանվում էին: 18-րդ դարի երկրորդ կեսին Կարին (Էրզրում) քաղաքում հայտնի է եղել զինագործ Այվազյանների ընտանիքը, որի ավագը՝ Աղալարը, այնպես էր վարպետացել իր գործի մեջ, որ սուլթան Մահմեդի հատուկ հրամանով նշանակվել էր Կոստանդնուպոլսի զինագործական հինգ տասնյակի հասնող արհեստանոցների գլխավոր մասնագետ, ղեկավար-տնօրեն:



1828-29թթ. մեծ թվով հայեր Կարինից գաղթեցին եւ հաստատվեցին պատմական Ջավախքում Ախալցխայում եւ Ախալքալաքում: Գաղթածների մեջ էր նաեւ վարպետ Աղալար Այվազյանը, որը 600 տարվա վաղեմություն ունեցող արհեստանոցի գույքը տեղափոխեց եւ Ախալցխայի Դամրչնոց թաղամասում հիմնեց զինագործության նոր, կատարելագործված կենտրոն: Նրա գործը շարունակեցին զույգ որդիները՝ Սկրտիչը եւ Հովհաննեսը, որոնք Կովկասում ձեռք բերեցին անվանի զինագործի համբավ: Եղբայրներն այնքան նման էին միմյանց, որ ժողովուրդը նրանց անվանեց «չիֆթլար»՝ զույգեր: Այստեղից էլ նրանց Չիֆթալարյան ազգանունը: Նրանք զինագործությունը համատեղում էին գլանողի, հյուսնի, դարբնի, զարդանկարչի ու գեղանկարիչ-արծաթագործի մասնագիտությունների հետ, գեղարվեստորեն բարձրաճակատի ձեւավորում անհատական հրազենի բոլոր տեսակները: Նրանց պատրաստած կայծքարավոր զենքի հավաքածուները ցուցադրվել են Լոնդոնի, Փարիզի, Բրյուսելի եւ Սանկտ Պետերբուրգի միջազգային ցուցահանդեսներում եւ արժանացել ոսկե մեդալների: Սկրտչի կայծքարավոր զենքի բացառիկ հավաքածուն այսօր էլ պահվում է Էրմիտաժում: Նրա անունով Լոնդոնից պաշտոնական հրավեր ստացվեց արհեստանոցով եւ



ընտանիքով Լոնդոն տեղափոխվելու առաջարկով: Սակայն... հայրենամներ այրը մերժեց այդ հրավերը՝ պատասխանելով. «Իմ կարողություններն ու եռանդը Հայաստան հայրենիքիս մենաշնորհն են»:

1860-ի ամռանը ռուսց Ալեքսանդր 2-րդ կայսրը հանգստանում էր Բորժոմում: Սկրտիչ Չիֆթալարյանը նրան նվիրում է իր պատրաստած կայծքարային հրացանն ու երկու կարաբին: Կայսրը ոսկե մեդալ է ամրացնում նրա կրծին եւ հայտարարում. «Զինագործության մեջ մեր հարեւան հայ անվանի վարպետները գերազանցեցին մեզ»: Ձեռքը մեդալի հետ միասին այժմ «հանգրվանում են» Էրմիտաժի կովկասյան բաժնում:

Զինագործ Չիֆթալարյանների վերջին շառավիղը Արամն է: Տակավին վեց տարեկանում նա ութ դրեց պապական արհեստանոց (ավելի ճիշտ՝ արվեստանոց), եւ որպես ընտանեկան թանկագին մասունք պահպանվում է այդ տարիների նրա ձեռքի աշխատանքը՝ չախոն, որի մոխրագույն կոթին դաջված է. «Արամ, 6 տարեկան»: Իսկ արդեն երկու տարի հետո նրա անվանն ավելացավ «վարպետ» բառը:

Շուտով Չիֆթալարենց զինագործական արհեստանոցում ստեղծվեցին գլանող մեքենաներ, ինքնաշարժ ջրաղացներ: Չիֆթալարյանները հայտնի գյուտարարներ են. Արամի կրտսեր հորեղբայրը Եղիշեն, 15 տարեկանից զբաղվել է մեղվաբուծությամբ՝ ստեղծել մոմաթերթ արտադրող մեքենա, իսկ այլուհինից՝ մեղրահաց: Նրա պատրաստած բացառիկ մեղրահացը ցուցադրվել է Բրյուսելի տոնավաճառ-ցուցահանդեսում եւ շահել Ոսկե մեծ մեդալ՝ մեղվի պատկերմամբ, հանձնվել զանգվածային արտադրության:

Ախալցխայի 1917-18թթ. յոթամսյա պաշտպանության օրերին Չիֆթալարյան Արամ եւ Սկրտիչ (նշանավոր նկարիչ եւ զինագործ) եղբայրները զօր ու զիշեր զինում էին քաղաքի բնակչությանը, կազմակերպում ինքնապաշտպանության հերոսական մարտերը՝ զորապետ Ջորի Ջորյանի գլխավորությամբ: Չիֆթալարյանները Ջավախքում փամփուշտի գործարան հիմնեցին եւ արտադրանքը բաժանեցին հայ զինվորներին: Ինքնապաշտպանությունն ավարտվեց հաղթանակով:

1926-ի մայիսին 23-ամյա Արամը դուրս է գալիս ծննդավայրից, ընդմիշտ բաժանվում տոհմական արհեստանոցից, որն այսօր էլ ծառայում է մարդկանց: Երեւանում ավարտում է պոլիտեխնիկական ինստիտուտը, աշխատում հիդրոտեխնիկ, մասնակցում Հայաստանի հիդրոէլեկտրակայանների շինարարությանը, ստեղծում նորագույն նախագծեր, նոր մոդելներ: Իսկ պապերի արիւստը: Մոռացվեց՝ Ոչ: Այն կատարելագործվեց եւ կերպարանափոխվեց:



- Հայի համար զենքը ինքնապաշտպանության եւ գոյատևման հուսալի միջոց է, ապրելու եղանակ,-

ընդգծում է տոհմիկ զինագործների վերջին շառավիղ Արամ Զիֆթալարյանը, որի ծննդյան հարյուրամյակը հունվարի 15-ին մեծ շուքով նշվեց ծննդավայրում եւ Երեւանում: - Աշխարհի մեծագույն բարիքները,- շարունակում է նա,- անկախությունն ու ազատությունը, արդարությունն ու ճշմարտությունը զենքով են ձեռք բերվում:

Արամ Զիֆթալարյանի ընտանեկան արխիվում տասնյակ արտոնագրեր կան: Նա բազում գյուտերի եւ նորարարությունների հեղինակ է: Ահա դրանցից մեկը՝ կարծր ապարներում թունելներ հորելու համար նախատեսված նոր մեքենան, որ կոչվում է «Արամ» եւ առաքվել է աշխարհով մեկ: Մեծ արձագանք գտավ նաեւ այգեգործի մկրատը: Նա սեղանին է դնում իր պատրաստած հուշանվերային զենքի հիանալի մոլշները. նրբագեղ, ամուր, անվրեպ: Ցույց է տալիս նամակներ, հեռագրեր, ուղերձներ՝ ստացված աշխարհի տարբեր մասերից:

Ծիրանենու փայտով, ոսկրով դրվագված արույրե փորձնական զենքեր է նվիրել մարշալ Բաղրամյանին, Շառլ Ազնավուրին, մարշալ Ժուկովին, Նիկոլայ Ռիժկովին, Ջորջ Բուշին, Միտերանին, Ելցինին, Թեոչերին, Աբել Աղանբեկյանին, Տիգրան Պետրոսյանին եւ այլոց: «Դուք ոսկի ձեռքեր ունեք,- կարդում ենք նամակներից մեկում,- շա՛տ ափսոս, որ անհետանում են հայ հիանալի վարպետների գերդաստանները: Շատ կուզենայի, որ արժանավոր հետնորդներ ունենայիք: Երկարակեցություն Ձեզ, հայոց այր»:

ԼԵՎՈՆ ԿԱՆՑՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՂԵՏՈՒԹՅՈՒՆ, #10, 1988թ.

ԿՈՄՊՅՈՒՏԵՐԸ ԵՎ ԿԱԴՐԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Գ. Ա. ՎԱՅՆՅԱՆ

Տեխնիկական գիտությունների թեկնածու

Լ. Ի. ՉԵՄԵՐԻՍ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու

ՍՄԿԿ XXVII համագումարում, կուսակցության հետագա որոշումներում, XIX Համամիութենական կուսկոնֆերանսում բարձրացված դեմոկրատիայի զարգացման հարցերը ստիպում են նորովի նայել կուսակցական, սովետական եւ տնտեսական մարմինների ղեկավար օղակի ընտրության պրոբլեմներին:

Գործնականում ղեկավարները նշանակվում են հիմնականում «վերելից»: Ներկայումս ակտիվորեն տարածվող մյուս տարբերակը ղեկավարներին «ներքելից» առաջ քաշելն է: Մեր կարծիքով երկու տարբերակն էլ ունեն մի ընդհանուր թերություն՝ միակողմանիություն: Առաջին դեպքում սահմանափակվում է կոլեկտիվի մասնակցությունը, երկրորդում՝ վարչա-կառավարչական ապարատին, հատկապես՝ վերադասին: Նպատակահարմար է ղեկավար աշխատանքի թեկնածուներին առաջ քաշել

երկու կողմից: Այդ դեպքում սոցիոլոգի խնդիրն է նախապես գնահատել կարգերը եւ հանձնարարականներ տալ նրանց որպես թեկնածուներ առաջ քաշելու հնարավորության վերաբերյալ: Ընտրություններից առաջ կադրերի գնահատման անհրաժեշտությունը թելադրվում է հետեւյալ նկատառումներով: Կոլեկտիվը, որպես օրենք, ղեկավարելու է առաջ քաշում այն մարդկանց, ովքեր, նրանց կարծիքով, ընդունակ են պաշտպանել կոլեկտիվի շահերը, օգնել նրան իրագործել արտադրական խնդիրները եւ բավարարել մարդկանց պահանջմունքները, այսինքն նրանց, ում կոլեկտիվում լավ գիտեն եւ ում հավատում են: Այստեղ նշանակություն ունի ղեկավարի թեկնածուների ընտրության մեկ չափանիշ, իսկ ադմինիստրացիան կարող է գնահատել նրանց այլ չափանիշով: Սովորաբար ադմինիստրացիան առաջարկում է այն թեկնածուներին, որոնք առաջին հերթին ընդունակ են ապահովել արտադրական հանձնարարությունների կատարումը, իսկ դա հիմնականում պահանջում է պրոֆեսիոնալ գրագիտություն: Այդպիսի մոտեցման դեպքում կարող է այնպես ստացվել, որ ղեկավարը չներգրվի կոլեկտիվում: Այդ պատճառով նախքան ղեկավարի նշանակումը կամ ընտրությունները, պետք է անցկացնել կադրերի նախնական գնահատում՝ գտնելու համար ղեկավար պաշտոնի թեկնածուներին օպտիմալ տարբերակը: Մեր կողմից առաջարկվող մոտեցման էությունն այն է, որ թեկնածուներին լավ ճանաչող աշխատողներին առաջարկվում է գնահատել նրանց գործնական եւ անձնական ունակություններն ըստ որոշ, նախապես կազմված «հատկությունների»* հավաքածուի, համապատասխան սյունակների առջեւ նշելով այն թեկնածուին (կամ նրա հերթական համարը), որին տրվում է նախապատվությունը: Ասենք, մարդկանց կարծիքով «գործարարություն» հատկությունն ունեն, օրինակ, Ա եւ Բ թեկնածուները՝ ցուցակում այդ հատկության դիմաց դրվում են նրանց ազգանունները կամ համարները: «Բարեխիղճ» հատկություն ունեն, օրինակ, Բ եւ Գ թեկնածուները՝ նրանց գրանցում են «հատկությունների» առաջարկվող հավաքածուի համապատասխան տողում: Կոմպյուտերների օգնությամբ դժվար չէ հավաքել «ծայները» եւ ամեն մի թեկնածության համար ստանալով դրանց բաշխումը, կառուցել «դիմանկարներ» ղեկավար պոստի համար յուրաքանչյուր թեկնածուի շանսերը գնահատելու նպատակով: Հասարակական կարծիքի հիման վրա կադրերի գնահատումը թույլ է տալիս աշխատողների օբյեկտիվ բնութագրեր եւ ընդհանրապես կադրային քաղաքականության ձեւավորման օբյեկտիվ չափանիշներ ստանալ: Բացառվում է նույնիսկ հարցման արդյունքները վերլուծող սոցիոլոգի սուբյեկտիվ միջամտությունը, քանի որ գնահատվում են բոլոր աշխատողները եւ ռեսպոնդենտները ինչ-որ որոշակի թեկնածուների կողմնորոշված չեն: Հարկ է նշել, որ մեր առաջարկած մեթոդիկան կարող է օգտագործվել աշխատողների ցանկացած կատեգորիայի գնահատման համար. ղեկավարներ, մասնագետներ, գիտաշխատողներ: Կադրերի որակական բնութագիր ստանալու համար, որ թույլ է տալիս բոլոր ռանգերի եւ կատեգորիաների (կուսակցական, սովետական եւ տնտեսական) ղեկավարների ընտրության համար բազա ստեղծել, կադրերի վերաբաշխման եւ դրանց ճիշտ օգտագործման համար, մի խոսքով՝ ձեռնարկություն,

կազմակերպությունների, ինստիտուտի կադրային քաղաքականության ձեւավորման համար անհրաժեշտ է ունենալ գիտատեխնիկական առաջընթացով եւ կառավարմամբ զբաղվող ղեկավարների ու մասնագետների բնութագրերի կոմպյուտերային, գրաֆիկական պատկերները: Մեր մեթոդի փորձնական ստուգումն առաջին անգամ կատարվել է 1987 թ. «Լույս» միավորումում: Որպես օրինակ բերենք 1-6 արտադրամասում ստացված արդյունքները, որտեղ գնահատվում էին արտադրամասի պետը, նրա երկու տեղակալները, երկու հերթափոխի պետեր, ինչպես նաեւ կուսկոմի եւ արհիկոմի ներկայացուցիչները: Հասարակական (կոլեկտիվ) կարծիքի հիման վրա ստացված «ձայների» բաշխումը բերված է 1a նկարում: Ակնհայտ է, որ գործարանի ադմինիստրացիայի ընտրությունը չի համընկնում արտադրամասի կոլեկտիվի կարծիքի հետ. ոչ ձեւական առաջնորդն է 1 հերթափոխի պետը, որը ստացավ 11 առավելագույն գնահատական, մինչդեռ արտադրամասի պետը՝ ընդամենը 8, մնացածներն ավելի քիչ: Այսպիսով, առաջանում է արտադրամասում կադրերի համապատասխան տեղափոխության անհրաժեշտություն, որի շնորհիվ հիերարխիան դառնում է ավելի հետեւողական եւ տրամաբանական (նկար 1b): Ղեկավարների որակական մագարդակի գծանկարային պատկերումը համապատասխան «դիմանկարների» տեսքով թույլ է տալիս որոշել, թե որքանով է ճիշտ եւ հիմնավորված կադրերի առաջարկվող կազմակերպական վերակառուցումը, ինչպես նաեւ, թե որ ղեկավարն է հարկավոր տվյալ արտադրամասին եւ ղեկավար աշխատանքի համար ինչպիսի հատկություններ նա պետք է ունենա: «Դիմանկարների» օրինակները բերված են 2-րդ նկարում: Դրանցից յուրաքանչյուրը բնութագրվում է «որակյալության» իր մակարդակով, որը ներկայացված է աշխատանքային կոլեկտիվի գործերում ղեկավարի «օգտակարության» աստճանն արտացոլող համապատասխան K գործակցով: Անձնական գործակիցների համեմատումը ցույց տվեց, որ այն ղեկավարները, որոնց «դիմանկարները» բերված են 2 a, b նկարներում միմյանցից տարբերվում են ոչ միայն ամբողջությամբ, այլ նաեւ բնավորության առանձին հատկություններով: Այսպես, երկրորդ լիդերի՝ 1-ին հերթափոխի պետի «օգտակար» մակերեսն ավելի մեծ է, այսինքն ավելի շատ են կոլեկտիվի կողմից դրականորեն գնահատված հատկությունները: Նա հավասարակշռված, հանգիստ մարդ է, ինչի մասին վկայում է հատկությունների «անկումների» աննշան քանակը: Առաջինների շարքը նրան հատկացնում են այնպիսի ունակություններն, ինչպիսիք են գործի, իմացությունը, կազմակերպվածությունը, պատասխանատվությունը (վերոհիշյալ ցուցակում համապատասխանաբար 8, 7, 9), վճռականությունը, ինքնատիրապետումը (12, 15), պանջկոտությունն իր նկատմամբ, մարդկանց հասկանալը, կարգապահությունը եւ բարյացակամությունը (24, 29, 30, 32): Այս հատկությունները դուր են գալիս մարդկանց, եւ մի կարգ բարձր են գնահատվում ղեկավարի պրոֆեսիոնալ արժեքներից: Այսպիսով, կոլեկտիվի կողմից ղեկավարի ընտրման չափանիշ հանդես են գալիս մարդկային հարաբերությունները, բայց ոչ ի վնաս նրա պրոֆեսիոնալ ունակությունների: Կադրերի գծանկարային դիմանկարների կազմումը թույլ

է տալիս ստանալ ղեկավարության վիճակի օբյեկտիվ պատկերը եւ որոշել կառավարչական կադրերի ընտրության չափանիշը գործարանի ադմինիստրացիայի կողմից: Մեր դեպքում պարզվեց, որ առավելապես արտահայտված են այնպիսի հատկություններ, ինչպիսիք են շահագրգռվածությունն արտադրության վիճակով, գործարարությունը, պրոֆեսիոնալ պատրաստվածությունը: Դրա փոխարեն կազմակերպչական ունակություններով արտադրամասի ղեկավարներն աչքի են ընկնում ամենից քիչ (բացի ոչ ձեւական լիդերից): Այստեղից հետեւում է, որ գործարանի ադմինիստրացիայի համար ստորաբաժանման ղեկավարների ընտրության չափանիշներ են մասնագետի պրոֆեսիոնալ ունակությունները: Տվյալ դեպքում հաշվի չի առնվում այն փաստը, որ բարձր պրոֆեսիոնալ պատրաստվածության դեպքում ղեկավարը կարող է չարողանալ նորմալ մթնոլորտ ստեղծել կոլեկտիվում եւ մարդկանց կազմակերպել արտադրական խնդիրների կատարման համար: Կարելի է նշել, որ գծանկարային դիմանկարումը չույլ է տալիս տեղեկություններ ստանալ նաեւ այն հատկությունների մասին, որոնց վրա անհրաժեշտ է աշխատել: Օրինակ, 1-ին հերթափոխի պետի «դիմանկարը» նշում է վարքում եւ բնավորությունում նրա այնպիսի թերությունները ինչպիսիք են անփութությունը, խոսքի եւ գործի անհամապատասխանությունը եւ այլն: Այսպիսով, անձնական գրաֆիկական կոմպյուտերների կիրառումը նոր հնարավորություններ է բացում ադմինիստրացիայի, կադրերի բաժինների եւ բոլոր մակարդակների ղեկավարների աշխատանքում, թույլ է տալիս կատարել կադրերի ռացիոնալ ընտրություն, տեղաբախշում, տեղափոխում եւ օգտագործում, ելնելով ձեռնարկության եւ իր՝ աշխատողի շահերից: Ղեկավարների վերաբերյալ կուտակված տվյալների բանկի եւ ԷՀՄ համամիութենական ցանցի հետ կապ ունեցող անձնական կոմպյուտերների օգնությամբ հնարավոր է դառնում գործնականում իրագործել պետական կադրային ծառայության ստեղծման եւ կադրային քաղաքականության անցկացման նպատակային ծրագիր:

* Աշխատանքում օգտագործված է պրոֆ. Լ. Ա. Ռեմանսկու (Լենինգրադ) մշակված գործնական եւ անձնական բնութագրերի ցանկը: Հետագոտման օբյեկտից կախված ցանկը կարող է փոփոխվել:

**ՏԻԵՁԵՐՔԻ ԱՐՄՈՆԱՅԻՆ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ
(Պողոսյան Ա.)**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վաղուց արդեն նկատվել է մի օրինաչափություն, երբ գիտության տվյալ բնագավառում առաջանում է խորը ճգնաժամ, ապա այն հաղթահարվում է ուսումնասիրության բոլորովին նոր օբյեկտի բացահայտմամբ: Այդպիսի իրավիճակ է

տիրում, իմ կարծիքով, բնագիտության՝ լայն իմաստով ֆիզիկայի բնագավառում: Ե՛վ միկրոաշխարհի, ե՛լ մեգաաշխարհի ուսումնասիրության ոլորտներում սպասվում է ֆիզիկական սիստեմների մի նոր դասի հայտնագործում: Հիացնունք է պատճառում այն հանգամանքը, որ ֆիզիկոսներից ավելի խորանուխները (Մ. Մարկով եւ ուրիշներ) գտնում են, որ նոր տիպի ֆիզիկական այն օբյեկտը միաժամանակ պատկանում է ե՛լ միկրոաշխարհին, ե՛լ մեգաաշխարհին: Անտիկ փիլիսոփա Անաքսագորի այս հրաշալի գաղափարը վերածնվում է արդի գիտության համապատասխան լրացումներով:

Շուրջ հինգ հազար տարի ընթացող նախամատերիայի որոնումները այսօր, ըստ երեւոյթին, հասել են կուլմինացիայի եւ երեւի թե մարդկությունը չի կարող երրորդ հազարամյակ մտնել առանց գտնելու այդ հարցի պատասխանը: Իսկ պատասխանը բխում է ոչ միայն արդի կոսմոլոգիայի եւ միկրոֆիզիկայի զարգացման ներքին օրինաչափություններից, այլեւ աշխարհի մասին գիտական պատկերացումների պատմական զարգացման ընդհանուր տրամաբանությունից: Խոսքը կոսմոլոգիական պատկերացումների պատմական զարգացման պրոցեսում վաղուց նկատված օրինաչափությունների եւ դրանցից բխող հետեւությունների մասին է:

Գիտության պատմությունը առանձնացնում է չորս հիմնական փուլեր.

- I. Պտղոմեոսի Երկրակենտրոն համակարգը:
- II. Կոպեռնիկոսի արեւակենտրոն համակարգը: Այն ցույց տվեց նախորդի սահմանափակությունը եւ ժխտելով Երկրի ունիկալությունը՝ ապացուցեց նրա պատկանելությունը մոլորակների դասին:
- III. Նյուտոն-Հերշելի աստղային աշխարհի մոդելը: Այդ «Աշխարհի սիստեմը» ունի կենտրոն, որը աստղերի կուտակում է եւ որից դեպի ծայրամասերը հեռանալիս խտությունը նվազում է: Սա փաստորեն Գալակտիկայի նախամոդելն էր, որը բացահայտեց Կոպեռնիկոսի համակարգի սահմանափակությունը եւ Արեւի պատկանելությունը աստղերի դասին: Սա նշանակում է, որ աստղերի գիտական հայտնագործումը տեղի ունեցավ այս փուլում, երբ պարզվեց, որ հեռավոր այդ լուսատուները մեր Արեգակի նման համակարգեր են:
- IV. 20-րդ դարի կոսմոլոգիան, որի հիմքում ընկած է Ա. Էյն-շտեյնի հարաբերականության ընդհանուր տեսությունը, ժխտեց ընդհանրապես կենտրոնի գաղափարը եւ գալակտիկաների ու դրանց կուտակումների

հայտնաբերմամբ բացեց կոսմոլոգիական ընդլայնումը:

Այսպիսով, յուրաքանչյուր փուլում ստեղծված «աշխարհի սիստեմ», ինքը հավակնելով համընդգրկելիության՝ հիմնավորում է նախորդի սահմանափակությունը (որոշակիորեն ընդգրկելով իր մեջ նախորդի ճշգրտված տարբերակը) եւ բացահայտում ֆիզիկական, ավելի ճիշտ՝ տիեզերական մարմինների մի ամբողջ նոր դաս: Բանը նրանումն է, որ յուրաքանչյուր «աշխարհի սիստեմ» որպես կենտրոն ընդունելով որեւէ երկրային մարմին, համարում է այն հազվագյուտ, մեկը, միակը: Մինչդեռ հաջորդ պատմական փուլում բացահայտվում են նման մարմինների մի ամբողջ բազմություն եւ ժխտելով այդ մարմնի տիեզերքի կենտրոն լինելը, այն տեղափոխվում է համակարգի ծայրամաս: Այդպես եղել է բոլոր փուլերում: Միայն քսաներորդ դարի կոսմոլոգիան օրիգինալություն դրսեւորեց այդ հարցում՝ ընդհանրապես ցխտելով կենտրոնի գաղափարը: Մի հանգամանք, որը դարասկզբին որոշ դրական դեր խաղալով հանդերձ, իմ համոզմամբ, դարձավ ժամանակակից կոսմոլոգիական ճգնաժամի հիմնական պատճառներից մեկը: Այդ ճգնաժամը հաղթահարելու համար պետք է հաշվի առնել վերը նշված պատմական օրինաչափությունները եւ որպես հիմք ընդունել դրանցից բխող հետեւյալ գաղափարները.

1. Այսօրվա կոսմոլոգիական պատկերացումները, որոնք եւս հավակնում են անվերջ Տիեզերքը նկարագրելուն, հիմնականում վերաբերում են մեր Մետազալակտիկային՝ համեմատաբար սահմանափակ տիեզերական մի համակարգի, որը ընդլայնվում է (անվերջ Տիեզերքում չի կարող գերիշխել շարժման, փոփոխման միայն մի տեմդեցը՝ ծավալումը), իսկ շատ միլիարդավոր տարիներ առաջ եղել է չափից դուրս սեղմ...

2. Մեր Մետազալակտիկան համանման մարմինների (ֆիզիկական սիստեմների) մի ամբողջ դասի ներկայացուցիչ է: Տիեզերքների կան Մետազալակտիկաների բազմաքանակության գաղափարը առաջ է քաշել եւ պաշտպանել ակադեմիկոս Վ. Համբարձումյանը:


3. Քանի որ կոսմոլոգիական ընդլայնումը վերաբերում է Մետազալակտիկային, հետեւապես պիտի վերականգնենք Մետազալակտիկայի կենտրոնի գաղափարը. ինչպես կարող է լինել թեկուզ տիեզերական մասշտաբների, բայց եւ սահմանափակ, լոկալ սիստեմ եւ չունենալ սիստեմագոյացման կենտրոն: Միայն անվերջ Տիեզերքը կարող է կենտրոն չունենալ: Այսպիսով, տեղի է ունենում գիտության պատմական զարգացման մեջ Հեգելի դիալեկտիկայի հայտնի բացասման բացասումը... ժխտելով Էյնշտեյնի կենտրոնի բացակայության գաղափարը,

վերականգնում ենք Նյուտոնի պատկերացումը կենտրոնի մասին: Կենտրոն, որից դեպի ծայրամասերը գնալիս, նյութի միջին խտությունը նվազում է:

4. Մետազալակտիկայի խոշորամասշտաբ կառուցվածքի առաջացման բոլորովին նոր մոտեցում, որի համաձայն Մետազալակտիկայի կենտրոն-միջուկից պարբերաբար անջատվում են ոչ լուսատու մարմիններ, որոնք հեռանալով միջուկից, «սառչում են» ու բոցավառվում՝ վերածվելով քվազարների: Այս վերջիններս էլ հետագայում էվոլյուցիա են ապրում՝ վերածվելով նախ գնդաձեւ գերկուտակման, ապա գալակտիկաների հասուն գերկուտակման: Ուրեմն, մի կողմից հաստատվում է, իհարկե, նոր ձեւով, Մետազալակտիկայի կառուցվածքի ձեւավորման Բյուրականյան մոտեցումը եւ, ապա առաջ քաշվում կոսմոլոգիական ընդլայնմանը զուգընթաց դրական զանգվածի առաջացման եւ միջուկից դրա արտամղման պրոցեսի անընդհատության գաղափարը:

5. Մետազալակտիկայի կենտրոնով կամ միջուկով մոդելից բխում է եւս մի տպավորիչ հետեւություն. տեղի է ունենում Կոպեռնիկոսի «ռեֆորմի» նման մի բան: Անհրաժեշտ է Մետազալակտիկայի խոշորամասշտաբ կառուցվածքի տեսանելի պատկերը այլ կերպ մեկնաբանել: Այդ պատկերում քվազարները տեղաբաշխված են ծայրամասերում, մինչդեռ, իմ կարծիքով, իրականում քվազարները գտնվում են կենտրոն-միջուկի մոտերքում, իսկ գալակտիկաների գերկուտակումները՝ ծայրամասերում:

Ահա այսպիսի եւ նման բավականին «խելագար» գաղափարների հիման վրա է ստեղծվել Արմոնների տեսությունը:



ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ ԱՅՍ ՕՐԸ ԾՆԿԵՑ ԱՍԱԼԱ-Ն

1973 թ. հունվարի 27-ին, Կալիֆոռնիայի Սանտա-Բարբարա քաղաքում սպանելով Լուս Անջելեսում թուրքիայի գլխավոր հյուպատոսին ու նրա տեղակալին, համիդյան ու երիտթուրքական եղեռներից մազապուրծ, ծերունի Գուրգեն Յանիկյանը (1895-1984) հայտարարեց, իր իսկ խոստովանությամբ, «հայ անհատի պատերազմը թուրքիո դեմ»: Նրա արձակած փամփուշտները նախանշեցին ազատագրական պայքարի միջոցը սփյուռքի այն հայ երիտասարդների համար, որոնք 1965 թ. Մեծ եղեռնի 50-ամյակի միջոցառումներից արթնացել էին թմբիկից ու ելք էին որոնում:

1975 թ. հունվարի 20-ին Բեյրութում, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գրասենյակի ռմբահարումով «Յանիկյան կոմանդոն» ազդարարեց իր ծնունդը: Այս փոքր խմբակը հետագայում համալրվեց նոր անդամներով եւ կարճ ժամանակ «Հայ գաղտնի բանակ» անունը կրելուց հետո 1977 թ. վերջնականապես որդեգրեց «Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ» (օտար անվան հապավումով՝ ԱՍԱԼԱ) անունը:

Ինչո՞ւ ԵՀԽ-ի գրասենյակի ռմբահարումը: Կազմակերպությունը գտնում էր, որ Խորհրդային Հայաստանից ու հայոց հայրենիքի մերձակա երկրներից հայության արտագաղթը սպառնում է հայ ազգի գոյությանը, իսկ ԵՀԽ-ն արտագաղթը քաջալերող ակտիվ գործունեություն էր ծավալել:

ԱՍԱԼԱ-ն ավելի քան 5 տարի գործեց խորը գաղտնապահության պայմաններում, այն աստիճանի, որ սփյուռքահայ որոշ խմբագիրներ կասկած էին հայտնում նրա անդամների հայ լինելու առնչությամբ: 1980 թ. շրջադարձային եղավ կազմակերպության համար. հունիսին ծնվեց ԱՍԱԼԱ-ի քաղաքական թեւը համարվող հայկական ժողովրդային շարժումը. հոկտեմբերին, երբ թողարկման էր պատրաստվում ԱՍԱԼԱ-ի «Հայաստան» պաշտոնաթերթի առաջին՝ զրոյական համարը, շվեյցարական մի հյուրանոցում, ամսի 3-ին հերթական ռումբի տեղակայմանը նախապատրաստվելիս արկածի հետեւանքով բացահայտվեցին ԱՍԱԼԱ-ի երկու անդամներ՝ Ալեք Յենիգոնջյանը (կորցրեց աջ բազուկն ու տեսողությունը) եւ Սյուզի Մահսերեջյանը: Նրանք էլ

եղան կազմակերպության առաջին բանտարկյալները:

ԱՍԱԼԱ-ն մեծ թափ հավաքեց հատկապես հաջորդ տարի, եւ սովորական դարձած ռմբահարումներից ու թուրք դիվանագետների սպանություններից անցում կատարեց այսպես կոչված «որակական գործողությունների», թեւ նախորդ «ավանդական» գործողությունները շարունակվեցին: 1981 թ. սեպտեմբերի 24-ին իրականացվեց «Վան» գործողությունը, երբ «եղիա Քեշիշյան» անձնասպանական կոմանդոյի չորս մարտիկները 15 ժամ գրավման տակ պահեցին Փարիզում Թուրքիայի հյուպատոսարանը: Որակական գործողություններ էին նաեւ 1983 թ. հուլիսի 15-ին Փարիզի «Օռլի» օդանավակայանի «Թուրքական ավիաուղիների» գրասենյակի առաջ պայթած ռումբը (որը պետք է պայթեր թռիչքի ընթացքում), 1982 թ. օգոստոսի 7-ին Անկարայի «Էսենբողա» օդանավակայանում իրականացված «Կարին» եւ 1983 թ. հունիսի 16-ին Ստամբուլի ծածկած շուկայում իրականացված «Յակոբ Յակոբյան» անձնասպանական գործողությունները: 80-ականների երկրորդ կեսին ԱՍԱԼԱ-ի թափը զգալիորեն նվազեց տարբեր պատճառներով, որոնց շարքում արյունոտ հակամարտությունը ՀՀ-ի հետ, վերջինիս ղեկավարության մեղքով, ներկազմակերպական դավադրությունը, թուրքական գաղտնի ծառայությունների կողմից ԱՍԱԼԱ-ի եւ ՀԺԸ-ի մի շարք ակտիվիստների սպանությունը Լիբանանում ու Եվրոպայում: 1988 թ. ապրիլի 28-ին Աթենքում խորհրդավոր պայմաններում սպանվեց կազմակերպության հիմնադիրներից ու փաստական ղեկավար Յակոբ Յակոբյանը (կազմակերպական այլ կեղծանուններով՝ Մուջահեդ, Աբու Ահմադ եւ այլն: Բուն անունով՝ Յարություն Թագուշյան՝ Իրաքի հյուսիսի Ջախոյի շրջանից): ԱՍԱԼԱ-ի վերջին հայտարարված գործողությունը եղավ 1990 թ. ղեկտեմբերին Բուդապեշտում Թուրքիայի դեսպան Բեդրեդին Տունաբաշի սպանության անհաջող փորձը:

1980-ականներին իրականացրած գործունեությունների հետեւանքով ԱՍԱԼԱ-ն ունեցավ ավելի քան 30 նահատակներ, բազմաթիվ բանտարկյալներ աշխարհի տարբեր երկրներում: Բոլոր բանտարկյալները, բացի ֆրանսիական բանտում ինքնասպանության մղված Արամ Բասմաջյանից, մինչեւ 2001 թ. ապրիլն ազատ

արձակվեցին: Նրանք 1990-ականներին հանգրվանեցին Մայր հայրենիքում. առաջինը եղավ «Վան» գործողության ղեկավար Վազգեն Սիսյանը (1990 թ. ապրիլին), վերջինը՝ «Օռլի» գործով մեղադրված Վարուժան Կարապետյանը (2001 թ. ապրիլին): ԱՍԱԼԱ-ի նախկին անդամներից Մոնթե Մելքոնյանն ու Գեւորգ Գյուզեյանը մասնակցեցին արցախյան ազատամարտին. Մոնթեն զոհվեց Մարզիկում, 1993 թ. հունիսին: Հայրենիքում հաստատված ԱՍԱԼԱ-ականներից ոմանք (Դավիթ Դավիթյան, Աբրահամ Խամիսյան, Էլեն Սանդրիկ եւ ուրիշներ) 90-ականներին սպանվեցին խորհրդավոր պայմաններում, համալրելով ՀՀ-ում խորհրդավոր ու չբացահայտված սպանությունների շարանը...

ԱՍԱԼԱ-ի զինանշանն էր Սիացյալ Հայաստանի քարտեզը՝ կենտրոնում AK տիպի ինքնաձիգով: Կազմակերպությունն ունեցել է երկու նշանախոսք, որոնք միշտ տեղ են գտել նրա պաշտոնաթերթերի ճակատներում. «Կեցցե՛ իրաւազրկուած ժողովուրդներու յեղափոխական միասնականութիւնը», «Ձինեալ պայքարը եւ քաղաքական ճիշտ գիծը ուղին են Հայաստանի»:

Թեւ ԱՍԱԼԱ-ի մասին լույս է տեսել ծովածավալ գրականություն (թե՛ հայերի եւ թե՛ օտարների հեղինակած տասնյակներով գրքեր ու հարյուրավոր հոդվածներ), այնուհանդերձ, մեր կարծիքով, ԱՍԱԼԱ-ի պատմությունն սպասում է իր անաչառ հետազոտողին՝ հեռու ամեն սուբյեկտիվ մոտեցումներից:

Ստեղծվել է ԱՍԱԼԱ-ին նվիրված խտասալիկ

ԱՍԱԼԱ-ի 30-ամյակի նախօրյակին, հավանաբար Բեյրութում ՀԺԸ-ը հրապարակ է հանել «ժողովուրդէն ժողովուրդին» խորագրված խտասալիկը (CD), որն ունի պատմական սկզբնաղբյուրի նշանակություն: Այն բովանդակում է 19 նյութ՝ երգեր, ուղերձներ եւ բանաստեղծություն: Կից տեղեկաթերթիկի մեջ հայտնվում է. «Մեր ժողովուրդը վերջին անելի քան 100 տարուան ընթացքին ունեցած է ազատագրական պայքարի երեք հանգրուաններ: Առաջինը՝ Սերոբ Աղբիւր, Գեորգ Չաուշ եւ Անդրանիկեան ժամանակաշրջանն է Արեւմտահայաստանի մէջ, երկրորդը՝ արցախեան

ազատագրական պայքարն է Արեւելահայաստանի մէջ, իսկ երրորդը՝ սփիւռքահայ ազգային ազատագրական նորագոյն պայքարն է՝ ընդդէմ հայկական հողերը բռնագրաւող Թուրքիոյ ու անոր դաշնակիցներուն, քանի որ առանց այդ վերջիններուն Թուրքիան անկարող է ոտքի կենալու: ԶԱՅԳԲ-ն այս երկրորդ հանգրուանին ռահվիրան է:

Ժողովուրդին ծոցէն ծնած այս կազմակերպութիւնը կը նմանի անոր. կորսնցուցած ըլլալով հայրենի հողը, ան ազգապահպանունը կը տեսնէ միայն բռնագրաւուած հողերու ազատագրութեան մէջ, յենած ըլլալով իր ժողովուրդին ուժին եւ կարողականութեան»:

Երգերի մեծ մասը ժողովրդական հորինումներ են՝ ներշնչված ԱՍԱԼԱ-ի իրականացրած այս կամ այն զգայացունց գործողությունից եւ առհասարակ նրա մղած պայքարից. ոմանք ԱՍԱԼԱ-ի ռազմակայաններում մարզվող մարտիկների ինքնաբուխ կատարումներ են: Ֆրանսահայ երգիչ Մարթեն Յորգանցի կատարումով հնչում են երկու երգեր, որոնցից «Սիրելի մայրը» մահապարտի խոսքն է իր մորը: Կան նաեւ երգեր, որոնք «ներշնչած են հայ նորագոյն ազատագրական պայքարի ազատամարտիկները»:

Անհնար է առանց խորը հուզումի ունկնդրել Գուրգեն Յանիկյանի եւ մահապարտներ Մկրտիչ Մադարյանի, Ջոհրապ Սարգիսյանի ու Լեւոն Էկմեկչյանի ուղերձներն իրենց ընտանիքներին եւ առհասարակ հայ ժողովրդին՝ մահվամբ անմահությունը նվաճելու մեկնելուց առաջ: Զուգիչ է նաեւ Սիլվա Կապուտիկյանի՝ Լեւոնին նվիրված «Գիշերային ռեքվիեմ» բանաստեղծությունը, արտասանված իր իսկ՝ բանաստեղծուհու շուրթերով, ԱՍԱԼԱ-ի գաղափարական հայրերից Սիմոն Սիմոնյանի հիշատակին Երեւանում կայացած մի միջոցառման ժամանակ: Յանիկյանը Չինոյի (ԱՄՆ) իր բանտախցից հայտարարում է. «Թող աշխարհը գիտենա, որ մարդկությունը հայ ազգին պարտք ունի վճարելիք: Զպարտ են, որ հայ են, հպարտ են, որ հայ են ծնվել, հպարտ եղեք եւ Դուք, իմ սիրելի հեռավոր ցեղակիցներ, որ պատկանում եք մի ազգի, որ քանի-քանի անգամ ապացուցել է աշխարհին, որ կարող է տալ իր զավակների արյունը՝ ազատության ու արդարության համար... Մեր Զայկական դատն ինձ

համար մի հասկացություն ունի՝ մեզմից գողացված ու թուրքին նվիրված մեր հայրենական հողերի հետ ստանալը մեր ազգի համար եւ թուրքի մեր ազգին հասցրած վնասների հատուցումը»: Յանիկյանը քննադատում է հայկական ավանդական կուսակցություններին՝ կրավորականության համար ու համբուրում ԶԱՅԳԲ-ի մարտիկներին, որոնք «խոսքերի հեղեղի փոխարեն գործ են ցույց տալիս»: Նա կտակում է. «Ո՛ւժն է թելադրում մարդկանց գործերը եւ ոչ թե փառաբանված սերն ու գթությունը» ու ավելացնում. «Ոսկե պնակի վրա ոչ մեկի պետություն եւ երկիր չի տրվում»: Յանիկյանն իր հպարտությունն է հայտնում, որ ԶԱՅԳԲ-ականներն իրենց «Յանիկյանի ջոկատներ» են հայտարարում:

Մկրտիչ Մադարյանը (Ստամբուլի ծածկած շուկայի անձնասպանական գործողությունն իրականացնողը) իր վերջին ուղերձում մասնավորաբար ասում է. «Ով, սիրելի հայ ժողովուրդ, կան մահ, կան ազատություն... Ձե՛նքն է, որ մեզ պիտի հասցնե մեր բուն նպատակին: Վաթսուն տարիէ ի վեր մենք տեղքայլ ըրինք. հերիք է այլեւս... Տո՛ւր այդ զենքը, որ երկար տարիներ կսպասեր հայու բազուկ մը, հայ մը, որ իրեն վեր բարձրացներ: Ո՛վ հայ, լուռ մի՛ մնար, բոլոր աշխարհ քու ձայնդ թող լսե... Մնաք բարով, իմ սիրելի հայ ժողովուրդ, իմ սիրելի եղբայրներ եւ քույրեր, վստահ եմ, թե իմ ետեւեն պիտի շարունակեք պայքարը, սրբազան պայքարը, սո՛ւրբ պայքարը...»:

Ցավալի է արձանագրել, որ այս հույժ կարեւոր նշանակության խտասալիկը տեխնիկական լուրջ թերություններ ունի: Զրապարակողները դա նկատի են ունեցել տեղեկաթղթիկում ունկնդիրների ուշադրությանը հանձնելով այն, որ խտասալիկը «հաւաքուած է զանազան հին ու սիրողական ձայնագրութիւններէ, որով յաճախ ձայնային որակն անհրաժեշտ մակարդակով չէ»: Այդուհանդերձ, այս նյութերն անհրաժեշտ սկզբնաղբյուր են ԱՍԱԼԱ-ի եւ առհասարակ հայ ազատագրական շարժման պատմությունն ուսումնասիրողների համար:

ԳԵՎՈՐԳ ՅԱԶԸՆՅԱՆ

